ՀԱՐԿԱԴԻՐ ԿԱՏԱՐՈՒՄՆ ԱՊԱՀՈՎՈՂ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ
ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ

Ե-81921-2025
06/05/2025

ՓՈՒՇԸՆԴՓՈՒԼԼ ՍՊԸ
ՀՀ, Համայնք Երևան, Մալաթիա-Սեբաստիա, Շահումյան
7փ., Տուն 12

Հարգելի՛ պարոն Տոնոյան

Հարկադիր կատարումն ապահովող ծառայության (այսուհետ՝ Պատվիրատու) և «ՓՈՒՇԸՆԴՓՈՒԼ» ՍՊԸ-ի միջև (այսուհետ՝ Կատարող) 20.01.2025 թվականին կնքվել է N «ՀԿԱԾ-ԷԱՃԾՁԲ-25/1» ծածկագրով պայմանագիրը (այսուհետ՝ Պայմանագիր), համաձայն որի՝ Կատարողը ստանձնել է Հավելված 1-ով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի համաձայն մինչև 2025 թվականի մարտի 1-ը հարկադիր էլեկտրոնային աճուրդի կայքը ներկայացներ «Կատարողական վարույթի մասին» ՀՀ օրենքին «Առցանց-աճուրդ» համակարգի համապատասխանեցման պահանջների ամբողջ փաթեթի ողջ ֆունկցիոնալությունն ապահովող համակարգի տարբերակը:

Պայմանագրի 1.1 կետի համաձայն՝ Կատարողը պարտավորվում է Պայմանագրով սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Պատվիրատուին մատակարարել պայմանագրի N 1 հավելվածով՝ տեխնիկական բնութագրով նախատեսված ծառայությունը՝ Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի համաձայն:

Պայմանագրի 1.2 կետի համաձայն ծառայությունը պետք է մատուցվի հավելվածներով նախատեսված ժամանակացույցով նախատեսված ժամկետներում:

Պայմանագրի 2.4.1 կետի համաձայն՝ Կատարողը պարտավոր է Պատվիրատուին հանձնել ծառայությունը՝ պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով:

Պայմանագրի 7.15 կետի համաձայն՝ Պայմանագրով նախատեսված ապրանքների մատակարարումն իրականացվում է այդ նպատակով ֆինանսական միջոցների առկայության և դրա հիման վրա կողմերի միջև համապատասխան համաձայնագրի կնքման միջոցով:

Ֆինանսական միջոցներ նախատեսվելուց հետո սահմանված կարգով 22.01.2025թ.-ին կնքվել է Պայմանագրի թիվ 1 համաձայնագիրը:

Այնինչ, Պայմանագրի 2.1.3 կետի համաձայն՝ Պատվիրատուն իրավունք ունի միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը:

Պայմանագրի 2.1.7 կետի ա) և բ) ենթակետերի համաձայն՝

ա) մատուցված ծառայությունը չի համապատասխանում պայմանագրի N 1 և/կամ N 2 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է ծառայության մատուցման ժամկետը:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգիրք) 347-րդ հոդվածի համաձայն՝ պարտավորությունները պետք է կատարվեն պատշաճ՝ պարտավորության պայմաններին, օրենքին և այլ իրավական ակտերի պահանջներին համապատասխան: Օրենսգրքի 408-րդ հոդվածի համաձայն՝ պարտավորության խախտում է համարվում այն չկատարելը կամ անպատշաճ (կետանցով, ապրանքների, աշխատանքների և ծառայությունների թերություններով կամ պարտավորության բովանդակությամբ որոշվող այլ պայմանների խախտմամբ) կատարելը:

Նշվածի լույսի ներքո և հիմք ընդունելով, որ «ՓՈՒՇԸՆԴՓՈՒԼ» ՍՊ ընկերությունը խախտել է Պայմանագրով ստանձնած պարտավորությունները՝ համաձայն Պայմանագրի 2.1.3 կետի, «ա» և «բ» ենթակետերի դրույթների, Հարկադիր կատարումն ապահովող ծառայությունը միակողմանի լուծում է N «ՀԿԱԾ-ԷԱՃԾՁԲ-25/1» ծածկագրով Պայմանագիրը:

«Գնումների մասին» օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը և մասնակիցը հրավերով և (կամ) պայմանագրով սահմանված ժամկետում չի վճարել հայտի, պայմանագրի և (կամ) որակավորման ապահովման գումարը:

«Գնումների մասին» օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքերն ի հայտ գալու դեպքում պատվիրատուի ղեկավարի պատճառաբանված որոշման հիման վրա լիազորած մարմինը մասնակցին ներառում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

Տեղեկացնում ենք, որ եթե լիազորված մարմնին որոշումը ներկայացվելու վերջնաժամկետը լրանալու օրվա դրությամբ մասնակիցը կամ պայմանագիրը կնքած անձը վճարում է պայմանագրի և (կամ) որակավորման ապահովման գումարը, ապա պատվիրատուն տվյալ մասնակցին ցուցակում ներառելու պատճառաբանված

որոշումը չի ներկայացնում լիազորված մարմին:

Տեղեկացնում ենք, որ Ընկերության կողմից տուժանքի ձևով ներկայացված պայմանագրի և որակավորման ապահովումները սահմանված կարգով կներկայացվեն ընկերությանը սպասարկող բանկ՝ պայմանագրի և որակավորման ապահովումները գանձելու /ՀՀ ֆինանսների նախարարության կողմից բացված 900008000664 գանձապետական հաշվեհամարին փոխանցելու/ նպատակով:

Հաշվի առնելով վերոգրյալն՝ առաջարկում ենք N «ՀԿԱԾ-ԷԱՃԾՁԲ-25/1» ծածկագրով գնման պայմանագրի որակավորման և պայմանագրի ապահովումները գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ սահմանված ժամկետում ամբողջությամբ վճարվելու դեպքում, այդ մասին գրավոր տեղեկացնել Հարկադիր կատարումն ապահովող ծառայություն՝ կցելով վճարումը հավաստող փաստաթուղթը (անդորրագիրը):

Տեղեկացնում ենք, որ եթե վճարման ենթակա գումարը փոխանցվի ՀՀ ֆինանսների նախարարության կողմից բացված հաշվեհամարին, ապա Ընկերության նկատմամբ չեն կիրառվի «Գնումների մասին» օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով և 2-րդ մասով նախատեսված դրույթները:

Հարգանքով՝

Աշոտ Ավագյան

Կատարող՝ Անժելիկա Վազգենյան
Աճուրդի կազմակերպման բաժնի
գլխավոր խորհրդատու
Հեռ. 060-713-438 /00162/

Digitally signed by
AVAGYAN ASHOT
3011650098
Date: 2025.05.06
09:12:53 AMT